ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

№ 22-Լ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՈՒՂՂՈՐԴԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՁԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 4-Լ հրամանի 19-րդ կետի 5-րդ ենթակետի.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումների պետերին՝

1) ապահովել ենթակա ստորաբաժանման ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազորություն ունեցող ծառայողների (այսուհետ՝ իրավասու) կողմից <<Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին>> օրենքով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությանը վերապահված գործառույթների պատշաճ իրականացումը,

2) ապահովել ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումներ հրավիրված ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքների իրականացումը առանձնացված սենյակում,

2.Սահմանել ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձին աջակցության կենտրոն ուղղորդելու վերաբերյալ իրազեկման թերթիկի ձևը՝ համաձայն հավելվածի:

3.Հրամանի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային գլխավոր վարչության պետին:

4. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողների և աշխատողներին:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ ***Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ 04.12.2024թ.

Հավելված

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի
նախարարության ոստիկանության պետ-ներքին
գործերի նախարարի տեղակալի

« 04 » դեկտեմբերի 2024 թ.

Թիվ 22 - Լ հրամանի

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՈՒՂՂՈՐԴԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված——————————————————————————ս
անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,/

իրազեկվեցի առ այն, որ աջակցության կենտրոններն ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկվածներին անվճար տրամադրում են հետևյալ ծառայությունները՝

- Սոցիալական խորհրդատվության տրամադրում՝ անվտանգության պլանավորում, պլանի մշակում, կարիքի և ռիսկի գնահատում, ուղղորդումներ և այլն,
- Ուղղորդում կամ աջակցություն աշխատանքի տեղավորման հարցերում,
- Ուղղորդում կամ աջակցություն՝ հմտությունների ձեռքբերման հարցերում,
- Ուղղորդում կամ աջակցություն՝ նոր բնակության վայր տեղափոխվելու հարցում,
- Անձնական փաստաթղթերի վերականգնում և ձեռքբերում,
- Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաներին
- անհրաժեշտության դեպքում ապաստարանում ապահովում,
- Ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց և նրանց երեխաներին հոգեբանական խորհրդատվության տրամադրում՝ ընտանեկան և կենցաղային բռնության և տրավմաների վերապրման, վերականգնման հարցերով, աշխատանք դեպրեսիայի և սուիցիդալ մտքերի հետ, շահառուի հզորացում՝ որոշումներ կայացնելու և հասարակության մեջ վերաինտեգրվելու հարցերում,
- Իրավաբանական խորհրդատվության տրամադրում՝ ամուսնալուծության, ալիմենտի, երեխաների բնակության վայրի հաստատման հարցերում, խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի նիստերի ներկայացուցչության ապահովում, քննչական գործողություններում մասնակցության և շահերի պաշտպանության ապահովում, դատական պաշտպանության և պետական պատկան մարմիններում ներգրավվածության ապահովում,
- Շուրջօրյա թեժ գծի ծառայություն:

Ծանոթացա՝ հաստատում եմ, որ ինձ տրամադրվեց աջակցության կենտրոնի թեժ գծի հեռախոսահամարը:

_____
/ստորագրություն/

« » _____ 20 թ.

_____

/ոստիկանության իրավասու ծառայողի պաշտոն, կոչում, անուն, ազգանուն/

« » _____ 20 թ.